№ 9 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 24 **1898** ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 24 № 9

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ **1898** ԹԻԱԿԱՆԻ

„ՄՇԱԿ"

(26-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնական փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

«ՄՇԱԿԻ» ԱՄԵՆՕՐԵԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍՎԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանող հոսանք. Էմիլ Զօլայի նոր նամակը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Հայոց թատրոն. Հայոց ներկայացումները Բագումի. Նամակ Բագուից. Նամակ Թէօդոսիայից. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ֆրանսիական պարլամէնտում. Կրետէի ազգաբնակութեան դրութիւնը. Նամակ Գերմանիայից. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Անբաղդ կղզին. Ոճրականութիւն և մահվան դատապարտութիւն։

ԿԼԱՆՈՂ ՀՈՍԱՆՔ

Մեր խոշոր քաղաքները անդադար մեծանում են և զարգանում. Թիֆլիսը, Բաքուն և Բաթումը ընդարձակվում են շատ արագ։ Չը նայելով որ այդ քաղաքներում ամեն տարի շինվում են բազմաթիւ տներ, դարձեալ զգացվում է բնակարանների պակասութիւն։ Մանաւանդ այդ կողմից աչքի է ընկնում Բագուն։ Բագուի նաւթային հարստութիւնը՝ միացած նրա նաւահանգստային ուրիշ յարմարութիւնների հետ՝ դէպի իրան է գրաւում մարդկանց թէ հեռու երկիրներից և թէ անդրկովկասեան գաւառներից։ Քաղաքների զարգացման տեսակէտից և գուցէ նոյն իսկ խոշոր արդիւնագործութեան տեսակէտից՝ այդ երևոյթը նպաստաւոր է, սակայն այդ երևոյթի մէջ կայ մի անմխիթարական կէտ, որի վրա հարկաւոր ենք համարում դարձնել առանձին ուշադրութիւն։

Գիւղական կեանքի մէջ, ինչպէս և ամեն տեղ, երկու տեսակ մարդիկ կան։ Մարդկանց մի տեսակը ոչնչով չէ զանազանվում իր նախորդներից և համարում է նրանց իդէալ, որին պէտք է ձգտել, նմանվել, թէև երբեմն էլ ոչ միայն նրան չէ հասնում, այլ և նրանից յետ է մնում։ Դա բուատինայի ներկայացուցչութիւնն է։ Մարդկանց միւս տեսակը ծանր է համարում ներկայ կեանքը, պահանջ է զգում փոփոխութիւններ մտցնել կեանքի մէջ. նա փորձեր է անում նոր պայմաններ մտցնել իր կենցաղավարութեան մէջ։ Այդ տեսակ մարդիկ միշտ եղել են կեանքի մէջ։ Եւ եթէ կեանքը փոքր ի շատէ փոխվել է և առաջ է գնացել, այդ կատարվել է շնորհիւ այդ տեսակ անձանց։ Սակայն հէնց այդ մարդիկն են, որոնց դէմ լճացած կեանքը կամ հալածանքներ է յարուցել կամ բուտինայի մի այնպէս յամառ դիմադրութիւն է ցոյց տուել, որ տեղնուտեղ ճնշել է ամեն մի նորութիւն, և ահա հէնց այդ մարդիկն են, որոնք իրանց ստիպված են զգացել աւելի անկախ կեանքի համար, տեղական ճնշումներից ազատ գործունէութեան համար, հեռանալ ծննդավայրերից և մտնել իրանց քաղաքների կեանքի հոսանքներին։

Հապուաղիւտ են այն դէպքերը, երբ քաղաքները բաւարարութիւն են տալիս այն ձգտումներին և պահանջներին, որոնց շնորհիւ մարդիկ վազում են դէպի կենտրոնները։ Սակայն նրանք, իրանց աւելի խոշոր, աւելի ուժեղ հոսանքներով կլանում են իրանց մէջ հազարաւոր մարդկանց, կամաց-կամաց խորտակելով նրանց մէջ ամեն մի ինքնուրոյնութիւն, և դարձնելով նրանց ստրուկ խոշոր արդիւնագործութեան համար։ Այն մարդիկ, որոնց մէջ վառ էր առաջ գնալու, կեանքի մէջ նորութիւն մտցնելու ձգտումների կայծը, որոնք փախել էին սահմանափակող և ճնշող կեանքից, ընկնում են աւելի և աւելի մեծ և ուժեղ ճնշումների տակ։ Եւ այդպիսով գաւառը դատարկվում է իր այն այժերից, որոնց վրա հիմնված, նա պէտք է կարողանար փոփոխութեան ենթարկել իր կեանքը և առաջադիմութեան պայմաններ պատրաստել իր համար. միւս կողմից քաղաքացիները ոչնչով չը նպաստելով դէպի նրանց վազող բազմութեան, պատրաստում են հլու ծառաների մի դասակարգ, որի կեանքը աւելի և ևս ծանր պայմանների մէջ է ընկնում, քան թէ հայրենի օջախում...

ԷՄԻԼ ԶՕԼԱՅԻ ՆՈՐ ՆԱՄԱԿԸ

Զօլա տպել է մի նամակ այս անգամ ուղղած զինուորական մինիստրին։ Առաջ ենք բերում մի քանի քաղուածքներ.

«Պ. մինիստր.

«Պատասխանելով իմ մեղադրանքին, որոնք ուղղված են ձեզ դէմ, ձեզ հաւասար և ձեր ըստորադրեալ անձանց դէմ, դուք ենթարկում էք ինձ երդվեալների դատարանին Սենայի դեպարտամենտում, փետրվարի 7-ին (նո. տ.)։ Ես կը գնամ դատարան։ Բայց ես կը պնդեմ, որ գործը օրինական ձևով դրվի կատարեալ լոյսի մէջ, մինչդեռ դուք, պ. մինիստր, ըստ երևոյթին, չէք կարողացել իմ մեղադրական նամակը։ Երևի ձեզ որ և է դրագիր է ասել, թէ ես մեղադրում եմ միայն զինուորական դատարանը «անարդար վճիռ յայտնելու համար, այն բանի համար, որ տուած հրամանի հիման վրա, կատարված է ապօրինութիւն և իրաւաբանական յանցանք՝ գիտակցաբար մեղադրելով անմեղին։

«Այդքանը բաւական չէր արդարութեան վերաբերմամբ իմ ունեցած պահանջին բաւարարելու համար։ Դուք ինձ ուղարկեցիք դատարան, ինչպէս և ամեն տեղ, երկու տեսակ մարդիկ կան։ Մարդկանց մի տեսակը ոչնչով չէ զանազանվում իր նախորդներից և համարում է նրանց իդէալ, որին պէտք է ձգտել, նմանվել, թէև երբեմն էլ ոչ միայն նրան չէ հասնում, այլ և նրանից յետ է մնում։ Դա բուատինայի ներկայացուցչութիւնն է։ Մարդկանց միւս տեսակը ծանր է համարում ներկայ կեանքը, պահանջ է զգում փոփոխութիւններ մտցնել կեանքի մէջ. նա փորձեր է անում նոր պայմաններ մտցնել իր կենցաղավարութեան մէջ։ Այդ տեսակ մարդիկ միշտ եղել են կեանքի մէջ։ Եւ եթէ կեանքը փոքր ի շատէ փոխվել է և առաջ է գնացել, այդ կատարվել է շնորհիւ այդ տեսակ անձանց։ Սակայն հէնց այդ մարդիկն են, որոնց դէմ լճացած կեանքը կամ հալածանքներ է յարուցել կամ բուտինայի մի այնպէս յամառ դիմադրութիւն է ցոյց տուել, որ տեղնուտեղ ճնշել է ամեն մի նորութիւն, և ահա հէնց այդ մարդիկն են, որոնք իրանց ստիպված են զգացել աւելի անկախ կեանքի համար, տեղական ճնշումներից ազատ գործունէութեան համար, հեռանալ ծննդավայրերից և մտնել իրանց քաղաքների կեանքի հոսանքներին։

Հապուաղիւտ են այն դէպքերը, երբ քաղաքները բաւարարութիւն են տալիս այն ձգտումներին և պահանջներին, որոնց շնորհիւ մարդիկ վազում են դէպի կենտրոնները։ Սակայն նրանք, իրանց աւելի խոշոր, աւելի ուժեղ հոսանքներով կլանում են իրանց մէջ հազարաւոր մարդկանց, կամաց-կամաց խորտակելով նրանց մէջ ամեն մի ինքնուրոյնութիւն, և դարձնելով նրանց ստրուկ խոշոր արդիւնագործութեան համար։ Այն մարդիկ, որոնց մէջ վառ էր ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԲԱՂԴ ԿՂԶԻՆ

Կօնստանցա, յունվարի 10-ին

Արդէն ընթերցողներին յայտնի է Կուբայի ապստամբութիւնը սպանիական կառավարութեան դէմ։ Եւրօպական լրագիրներում հրատարակված է Կուբայի աւետարանական քարոզիչ Դիացի մի գրութիւնը, որը շատ կենդանի կերպով ցոյց է տալիս կղզու թշուառ վիճակը սպանիական բռնակալ կառավարութեան տակ։ Պ. Դիաց ինքը հրաշալի կերպով ազատվելով մահվան պատժից, գտնվում է հիմա Ամերիկայում։ Նա գրում է.

«Երբ իր ժամանակին Հիւսիսային Ամերիկայից Կուբա պիտի վերադառնայի, առաջուց ծանօթ լինելով այնտեղի հանգամանքներին, բարեռք համարեցի Ամերիկայի հպատակութիւն ընդունելով՝ Միացեալ-Նահանգների պաշտպանութիւնը ձեռք բերել։ Իմ աւետարանական գործունէութիւնը սկսեցի կղզու բնակիչների մէջ և փոքր առ փոքր ազատ աւետարանական մի եկեղեցի գոյութիւն ստացաւ Հավաննայում։ «Ազատ եկեղեցի», ինչ քաղցր էին հնչում այդ բառերը ճնշված և ստրկացած ժողովրդի համար, որոնք ոչ միայն քաղաքական ազատութիւն, այլ կրօնի և խղճի ազատութիւն էլ չունէին։ Եւ շատերը մեզ մօտ գալով՝ փափագում էին յարել մեզ և մեր եկեղեցու անդամներ լինել։ Բայց ոչ թէ կրօնական հանգամանքը, այլ քաղաքական ազատութեան ծարաւն էր շատերի մէջ այդ փափագը զարթեցրել։ Կարծում էին, որ մեր եկեղեցուն յարելով, ամերիկական քաղաքացիներ կարող են լինել և Միացեալ-Նահանգների պաշտպանութիւնն ունենալ։ Ես ցոյց տուի, որ նրանց այդ կարծիքը սխալ է, և այդ մտքով մեզ մօտ եկողներին յետ դարձրինք։ Բայց շատ ուրիշներ դարձեալ միացան մեր համայնքի հետ։ Եւ հիմա մեր եկեղեցին այնտեղ 2,700 անդամներ ունի, որոնց բարոյական և կրօնական ազդեցութիւնը տարածվում է ամբողջ կղզու վրա։ Նրանցից շատերը ամեն շաբաթ բազմաթիւ ընտանիքների այցելելով՝ աւետարանի ազատ ճշմարտութիւնը տարածում են մայրաքաղաքում։ Մեր եկեղեցին սկզբում թատրոնի համար շինված մի շինութիւն էր, ուր այժմ մենք քարոզում ենք աւետարանի ճշմարտութիւնը։ Այնտեղ տեղաւորվում են 3000 ունկնդիրներ։ Դրսից եկեղեցու ոչ մի նշան չունի, որովհետև սա օրէնքի դէմ կը լինէր. նոյն իսկ իրաւունք չունենք հրատարակելու, որ մենք Աստուծոյ տուն ունենք այնտեղ. դա էլ, տեղական օրէնքների համեմատ, յանցանք կը համարվէր։

«Աւետարանի ճշմարտութիւնը քարոզելու համար վեց անգամ բանտն են դրել ինձ։ Բայց պատրաստ եմ դրա համար քսան անգամ էլ բանտ նստել։ Մի ժամանակ կաթոլիկ եկեղեցին կամեցաւ պատուել Ամերիկան գտնող Քրիստաֆոր Կոլումբոսին և սուրբերի կարգը դասել նրան։ Դրա դէմ բացարձակ քարոզեցի. «Ես էլ պատմութեան հետ ծանօթ եմ, ասեցի, գիտեմ, որ Կոլումբոսը գտել է Կուբան և շատ ուրիշ կղզիներ, բայց մթթէ դրա համար պէտք է սուրբերի կարգը դնել նրան»։ Ինձ բանտը դրին, բայց դատաւորները արդարացրին ինձ, որովհետև Կոլումբոս տակաւին սուրբերի կարգը չէր դասված. իսկ ինձ մեղադրողները պնդել էին, որ ես սուրբի դէմ քարոզել եմ...

«Կուբայի պարագաները անխուսափելի կերպով դէպի ապստամբութիւն էին դրդում ճընշված ժողովրդին. 17 տարիներ շարունակ ապստամբութիւնը սպառնում էր բռնակալ կառավարութեան. լուծն անտանելի էր ժողովրդին։ Հարկերը կաչկանդել էին բոլոր գործերը։ Կուբայի բնակիչների թիւը $1\frac{1}{2}$ միլիոնից քիչ աւելի է, բայց տարեկան 29 միլիոն դոլար տուրք է վճարում սպանիական կառավարութեան։ Հարկերը տարածվում են ամենաչնչին բաների վրա էլ։ Կուբայում բժշկութեան աստիճանին հասնելու համար 10—15 հազար դոլար պէտք է։ Բայց սրանով բանը չէ վերջանում։ Հէնց որ մէկն իր ուսումն աւարտելով կամենում է իր գործունէութիւնն սկսել իբրև բժիշկ, պարտաւոր է դրա համար տարեկան 300 դոլար վճարել։ Եթէ որ մէկ ձի պահի, 25 դոլար էլ սրա համար, 50 դոլար կառքի համար և այդպէս ամեն բանի համար հարկ պիտի վճարի։ Եթէ դրան վրա անուանը գրի փոքր տառերով, ամեն մի տառին 10 ցենտ, խոշոր տառերին $^1/_2$—1 դոլար։ Միջին թուով—մարդիկ, կանայք, երեխաներ վճարում են տարեկան իւրաքանչիւրը 25 դոլար հարկ։

«Առևտուրը բոլորովին ընկած է, որովհետև կղզին առևտուր անելու իրաւունքից զուրկ է։ Օրինակ, Սպանիան իր ալիւրը անմիջապէս Միացեալ Նահանգներից է տանում, առաջ տանում է Եւրօպա և յետոյ այնտեղից է բերում Կուբա։ Եւ զարմանալի չէ, որ մի փոքրիկ տակառ ալիւրը կղզում 15 դոլար արժէ։ Եթէ մէկը փորձէ ուղղակի Ամերիկայից բերել, շատ աւելի թանգ պիտի նստի, մեծ մաքսի պատճառով։ Առհասարակ կառավարութիւնը ամեն միջոց գործ է դնում կղզու յարաբերութիւնը Ամերիկայի հետ անհնարին դարձնել։ Առաջ եթէ մի հայր կամենար իր որդուն այնտեղ կրթութեան տալ, դա պետական յանցանք կը համարվէր և խեղճը իրաւունք չէր ունենայ որ և է հրապարակային գործի ձեռնարկել։ Երկար տարիներ աղօթել ենք Աստուծուն և աշխատել այդ գերութիւնից ազատվելու համար, և հաստատ յոյս ունենք, որ Տէրը իր ժամանակին ցանկացած ազատութիւնը պիտի պարգևէ։ Բայց մինչև հիմա տակաւին մէնակ ենք կանգնած, և դեռ ևս համբերութիւն պէտք է մեր սրտերին։ Ոչ մի տեղ ազատող չը գտնվեց։ Ազատութեան զանգերը շատ հնչեցրինք, բայց կարծես զուր եղաւ. մէկն էլ լսել չը կամեցաւ։

«Կղզուց աքսորվելով գտնվում եմ հիմա Միացեալ-Նահանգներում։ Ահա թէ ինչպէս եղաւ։—Մի առաւօտ շատ կանուխ, ժամը չորսին, յանկարծ մի քանի սպանիական ոստիկաններ եկան, որ ինձ ու եղբօրս կալանաւորեն։ Ամբողջ եօթը ժամեր քրքրեցին իմ բոլոր թուղթերը, տան ամեն իրեղէններ տակն ու վրա արին։ Ցետոյ հրամայեցին հետևել իրանց՝ դէպի բանտը։ Սրա համար փափագ չունէի շտապելու. մինչ իրանք թուղթերս քրքրում և կարդում էին, բոլոր ժամանակը հանդարտ նստած էի, և չէի նախաճաշել։ Առաջարկեցի որ թոյլ տան փոքր ինչ կազդուրվել և յետոյ տնից դուրս գալ։ Սպանիացիները ոչ մի բանի համար չեն շտապում և ամեն բանի ժամանակ ունեն. ինձ էլ ժամանակ տուին ուտելու։ Հրաւիրեցի պարոններին մասնակցել մեր նախաճաշին, որը ի հարկէ սիրով ընդունեցին։ Նստելու միջոցին եղբայրս խօսքով դրդեցրեց նրանց, որից օգուտ քաղելով շտապով մի հեռագիր գրեցի և առանց որ նրանք նկատեն, ամանիս տակը մտցրի։ Կինս յետոյ վերցնում ուղարկում է այդ հեռագիրը, որը մեր ազատութեան առաջին քայլ դարձաւ։ Ութ օր խիստ զգուշութիւնով պահեցին մեզ և իրաւունք չը տուին գրել կամ կարդալ, կամ մէկի հետ խօսել։ Վերջապէս մի շաբաթից յետոյ մեր դատը պիտի տեսնվէր։ Իբրև ամերիկական քաղաքացի մերժեցի նրանց հարցերին որ և է պատասխան տալ։ Իմ եղբայրը տուեց պահանջած բացատրութիւնները։ Կրկին հեռացրին մեզ և մեր առջև դրին մեր դատավճիռը,—մահվան պատիժ։ Թէև բողոքեցի դրա դէմ, բայց գիտէի որ անօգուտ էր, որովհետև մեր մահվան վճիռը դրված լինելով գործադրելը միւս օրն էր նշանակված։ Ամենախիստ կերպով հսկում էին մեզ։ Մի պահապան բոլոր ժամանակը գլխիս վրա կանգնած էր և ամեն երկու ժամը մի անգամ փոխվում էր։ Այլ ևս ձեռքիցս մի բան չէր գալիս, ծունկ դրի և աղօթեցի. «Տէր, քո կամքդ լինի, մի հրեշտակ ուղարկիր, որ թշնամիներից ազատի իմ անձը։» Եւ ահա կէս գիշերին նա իր հրեշտակը ուղարկեց։ Դա իմ եկեղեցու անդամներից մէկն էր, որը իբրև պահապան բռնեց առաջինի տեղը։ Նա հարցրեց, թէ ինքը ինձ համար ինչ կարող է

ԴԱՎԱԹԱՍՈՂՆԵՐ ԴԱՖԱՅԴԴ

ԱՅՍՕՐ ԱՌԱՎՈՏ ԵՎ ՀԱՅ ԿԻՆ

Ամենայն ազգերի մեջ, որոնք Աստուծոյ Խաչի տակ ապրելու արտաքին պատիւն ունեցան, Հայ Կինը ամենամեծ դերն ունեցաւ։ Ինչպէս Հայ Եկեղեցին

ԱՍՏՎԱԾՈՅ ԱՅԳԸՆԹԱՑՈՒՄԸ

Ց. Տ.

զվիզդզդվիլամսուփոք դարամ վիզդոցատա վինդոս տանուցարքա ո դարամ ոլնեաթ ոլնեաթ գեոր հիոս ՝ճանոմ վճվր վ ՝վզդոչդ վրոմ վր տանոտատ ոլվնազատոսոմդն վիոչմանդ: մէ դնեթքն մնոմ վիզդանսկիոզատ ՝ոտվ: ՝ենվգեանակ ոլվճատա կամ ՝մոտ դարամ դնոր ՝ենվգ

բարիք և արդարութիւն կատարել... Այս նոր, զօրաւոր քարոզիչը, իր կարող վրձինով, այս ընդհանուր յարգանքի և խորին հիացման տէրը՝ մեծ պատիւ է անում հայոց ազգին, ծագմամբ հայ լինելով: Եւ մինչ սա պակաս հաւատարիմ է, մինչ պակաս օգտաւէտ է, մինչ պակաս է սիրում Ռուսաստանը և պակաս է սիրված Ռուսաստանից, և մինչ պակաս է սրա մեծութիւնը նրանով, որ հայ է: Անտեղի մի համարէք, խնդրում եմ, եթէ իմ միտքս է գալիս Ս. Գրքի խօսքը, որով Աստուած պատրաստ էր խնայել քաղաքի բոլոր բնակիչներին, եթէ գտնվէին այնտեղ մինչև անգամ քանի մի բարեպաշտ մարդիկ, թէպէտ բնակիչները պատժի արժանի լինէին: Առանց հեռու գնալու, մեր ժամանակակից այնպիսի գործողների և հերոսների արժանիքները և ծառայութիւնները, ինչպէս Լօրիս-Մելիքով, Տէր-Ղուկասով, Շեչկովիչկով, Լաղարեվ և այսօր տօն կատարող մեծ և հանրահռչակ նկարիչ Այվազովսկին, այնքան արժէք ունեն, որ հայոց ազգը պէտք է վայելէր մարդավարի—լուսաւորված ռուս հասարակութեան արդար ուշադրութիւնը:

«Արդ, յարգելի տիկիններ և պարոններ, մեծ նկարչապետի յարգողներդ, խմեցէք նրա կենաց թասը, իբրև տարիներով ծանրաբեռնված գործողի: Ամենայն յոժարութեամբ մասնակցում եմ այս թանգագին կենաց թասին: Սակայն կամենում եմ մի ուրիշ բան առաջարկել: Ես կամենում եմ միշտ երիտասարդ լինել, սիրում եմ երիտասարդութիւնը, կամենում եմ միշտ երիտասարդների հետ ապրել: Եւ իսկն ասած՝ հոգևոր ծերութիւն չը կայ և պիտի չը լինի: Ուստի առաջարկում եմ հոգեկան երիտասարդութեան, առաջարկում եմ միշտ երիտասարդ Այվազովսկու կենացը, նրա իդէալներով, նրա թռիչքներով, նրա յաւիտեան երիտասարդ հոգու, նրա յաւիտեան երիտասարդ սրտի կենացը: Կեցցէ»: Այս խօսքերը ընդունվեցին երկարատև ծափահարութիւններով: Ս. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

—

Երևան, յունվարի 22-ին

Ուղարկում ենք սրտագին շնորհաւորութիւններ թանգագին «Մշակին», նրա փառաւոր 25-ամեակի առիթով: Մեզ բոլորիս համար շատ ուրախալի է «Մշակի» ամենօրեայ դառնալը: Ցանկանում ենք ազնիւ «Մշակին»՝ երկար տարիներ գործել յօգուտ ժողովրդի՝ անշեղ կերպով առաջ գնալով այն ճանապարհով, որ գծել է նրա անմահ հիմնադիրը:

Խաչատուր Մելիք-Աղամալեան, Ռուբէն Հասան-Զալալեան, բժիշկ Յովհաննիսեանց, բժիշկ Մուրադխանեանց, բժիշկ Եղեանց, Գրիգոր Տէր-Խաչատրեան, Սիրական Տէր-Մարտիրոսեան, Լևոն Բաբայեան, Տիգրան Ռաշմաճեան, Թովմաս Սարուխանեան, Մարտիրոս Յարութիւնեան, Գեղամ Ազիզեանց, Աստվածատուր Մարգարեան, Տիգրան Տէր-Յակոբեան, Լևոն Ամիրխանեան, Գէորգ Անտոնեան, Վահան Պողոսեան, Սարգիս Բաբասեան, Արամ Յակոբեան, Աղաջան Արշակունի, Խաչատուր Տէր-Խաչատրեան, Յովհաննէս Աբգարեան, Վարդան Յակոբեան, Ստեփան Աղամիրզեան, Բագրատ Խաչատրեան, Մինաս Պարսամեան, Գէորգ Մելիքեան, Լևոն Մարկոսեան, Յարութիւն Աւետեան, Յարութիւն Յովսէփեան, Բագրատ Սանահնեան, Սարգիս Մարգարեան, Վիրաբ Խաչէլեանց, Մարտիրոս Ճարակեան, Լևոն Ասլանեան, Յակոբ Թադէոսեան, Հմայեակ Գալուստեան, Մելքոն Խուդաբաշեան, Թաղիանոս Թաղիանոսեան, Երուանդ Տէր-Աւետիքեան, Հայրապետ Աստուածատրեան, Գեղէոն Ահարոնեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

—

Ալէքսանդրոպոլ, յունվարի 21-ին

Մենք՝ Շիրակի կոյր աշուղները, որ զրկված ենք բնական լոյսից, բայց աւելի լաւ ենք տեսնում նրան «Մշակի» միջոցով, սրտագին ողջունում ենք «Մշակի» ամենօրեայ հրատարակութիւնը և ամենաազնիւ աշխատաւորի 25-ամեակը:

Համբարձում Ադամեանց, Գարեգին Մըկրտչեանց, Երուանդ Չիլինգարեանց, Անտոն Անտոնեանց, Սարգիս Սարոյեանց, Խաչատուր Մարգարեանց, Գէորգ Սիմէոնեանց, Սմբատ Եգանեանց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունվարի 17-ին

Շնորհաւորում ենք «Մշակի» ամենօրեայ դառնալը և ցանկանում ենք, որ նա յարատեւի երկար քսան և հինգ տարիներ՝ ընթանալով նոյն շաւղով և դրօշակով: «Մշակը» մեր ամենօրեայ պահանջն է. «Մշակը» մեր միակ մխիթարութիւնն է ներկայումս: «Մշակը» մեզ կրթել է և կանգնացրել այն շաւղի վրա, որ տանում է դէպի ճշմարտութիւնը: Կեցցէ այն դրօշակը, որի ճակատին գրված է «հիմնադիր Գրիգոր Արծրունի»:

Դաւիթ Տէր-Դաւթեանց, Յարութիւն Միրիմանեանց, Գ. Ս., Տ. Խ., Նիկողայոս Մինասեանց, Բաղդասար Կարապետեանց, Գրիգոր Պապովեանց, Գէորգ Վարդանեանց, Արշակ Ամիրջանեանց, Եղիա Բաբաջանեանց, Աղէքսանդր Եղիազարեանց, Մ. Տ., Յարութիւն Ղազարեանց, Սարգիս Բաղալեանց, Յովհաննէս Յարութիւնեանց, Եփրէմ Մկրտումեանց, Խաչատուր Յարութիւնեանց, Յարութիւն Լուսարաքեանց, Արշամ Քանանեանց, Սոսի Վանեանց, Նիկողայոս Ղազումեանց, Դաւիթ Մազմանեանց, Կարապետ Ստեփանեանց, Մէհրաբ Մէհրաբեանց, Մակար Յովսէփեանց, Միսակ Մելիքեանց, Լևոն Շարպարոնեանց, Մկրտիչ Մատթէոսեանց, Աղէքսանդր Ստեփանեանց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

—

Էջմիածին, յունվարի 21-ին

Ի նկատի ունենալով, որ ակնյայտնի չարամտութեամբ տարածվում է նորերս Երևան եկած սուտ լուրը, թէ Էջմիածնի վանքի դրամարկղից անհետացել է 200,000 ռուբլի դրամ, իմ պարտաւորութիւնն եմ համարում պաշտօնապէս յայտնել, որ այդ տեղեկութիւնը զուրկ է որ և է հիմքից և որ ոչ մէկ կոպէկ չէ կորել վանքի դրամարկղից: Կ. Պոլսի լրագիրներում այդ լուրը հերքելու համար ես դիմեցի խնդիրքով սրբազան Օրմանեան պատրիարքին:

Սինոդի անդամ և Էջմիածնի վանքի գանձապահ՝ Աշոտ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթ ու կէսից:

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Էժանագին ընթերցարանը դիմել է Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին, խնդրելով տարեկան մի որոշ նպաստ յատկացնել Էժանագին ընթերցարանի պահպանութեան համար, ինչպէս արել է քաղաքային դումա: Անցեալ տարվանից, Էժանագին գրադարանը բացել է իր ճիւղը Հալաբարում, ուր ընթերցարանը յաճախում են գլխաւորապէս մշակներ և արհեստաւորներ. դիտաւորութիւն կայ մի ճիւղ ևս բանալ Վերայում կամ Խարիսխում, եթէ գտնվեն միջոցներ: Մենք չենք կասկածում, որ Բարեգործական ընկերութեան խորհուրդը համակրութեամբ կը վերաբերվի այդպիսի մի առաջարկութեան և իր օգնութիւնը չի խնայի այդպիսի մի համակրելի հիմնարկութեան, ինչպիսին է Էժանագին ընթերցարանը:

—

Պարիզից մեզ ուղարկած մի յայտարարութիւնից երևում է, որ իշխան Գուիդօն Լուսինեան, որ մեր գրական աշխարհում աւելի ծանօթ է Ամբրոսիոս Գալֆայեան անունով, նախկին վարդապետ, ձեռնարկել է մի նոր ընդարձակ ֆբրանս—հայ պատկերազարդ բառարանի հրատարակութեան: Բացի լեզուի սովորական բառերից, նոր բառարանը պէտք է պարունակէ նաև գիտական բառեր, անծանօթ բոյսերի և կենդանիների պատկերներ: Արդէն հրատարակված է բառարանի առաջին հատորը, որ պարունակում է A. B. C. տառերը և բաղկացած է 650 եռասիւն մեծադիր էջերից: Մեր կարծիքը այդ բառարանի մասին կը յայտնենք, երբ կը ստանանք առաջին հատորը:

—

Հանգուցեալ Ա. Նոբէլ, Բագուի յայտնի նաւթարդիւնագործական ֆիրմայի հիմնադիրը, ինչպէս յայտնի է, կտակել է մի մեծ դումար՝ խաղաղութեան գաղափարը տարածելու նպատակով: «Խաղաղութեան բարեկամների չվէդական ընկերութիւնը», որ այս օրերս ժողով գումարեց Ստոկհոլմում՝ որոշելու թէ ում պէտք է յատկացնել Նոբէլի պրէմիան,—իր հանդիսաւոր նիստում այդ պրէմիան յատկացրեց հռչակաւոր ռուս գրող Լէվ Տոլստոյին: Ընկերութեան ընդհանուր ժողովը այն միտքը յայտնեց, թէ քանի որ Նոբէլ խաղաղութեան գաղափարի երանդուն կողմնակից էր, ուստի նրա պրէմիան, որ բաղկանում է մի խոշոր գումարից, պէտք է յատկացնել մի այնպիսի անձի, որ ոչ միայն այդ գաղափարի գլխաւոր պաշտպանն է, բայց երբէք չի գործածի այդ գումարը իր անձնական օգտի համար, այլ կը գործադրի այդ գումարը՝ իբրև միջոց՝ խաղաղութեան գաղափարը զարգացնելու համար:

—

Ի նկատի ունենալով, որ մեր քաղաքային ջրանցքը շատ անգամ չէ կարողանում ջուր մատակարարել քաղաքին, Թիֆլիսի քաղաքային դուման մտադիր է ձեռք բերել երկրորդ շոգեշարժ մեքենայ, որը կը սկսի գործել այն դէպքում, երբ առաջինը որ և է պատճառով ստիպված կը լինի կանգ առնել: Այդպիսով յոյս կայ, որ ջրանցքի մէջ ջուր չը լինելու դէպքերի առաջը կառնվի...

—

Մեզ հաղորդում են հետևեալ տգեղ փաստը.—այս օրերս Թիֆլիսի Թանդոյեանց եկեղեցու բագում վախճանվում է մի գաղթական քահանայ: Վերափառը կարգադրում է հոգալ ամեն ինչ և կատարել թաղումը: Ես ահա գործակալ քահանան թղթով դիմում է Թիֆլիսի վաճառականներից մէկին և փող խնդրում «պատանքի և զանազան ծախքերի համար»: Մեր տէրտէրները, փոխանակ իրանց ընկերակից—քահանային, գէթ ի պատիւ գաղթականների, իրանց հաշվով և ջանքերով թաղելու, չեն ամաչում դիմել ուրիշ մարդկանց և «զանազան ծախքերի» համար փող խնդրել... Երևի այդ «զանազան ծախքերից» մէկն էլ թաղող քահանաների վճարը կը լինի...

—

Ինչպէս յայտնի է, 1890 թվի նոյեմբերի 22-ին կայացած Բարձրագոյն հրամանի համաձայն՝ Ռուսաստանի բոլոր լիւտէրական դպրոցները, որոնք առաջ գտնվում էին լիւտէրական հոգևորականութեան անմիջական տնօրէնութեան ներքոյ, ենթարկվեցին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան: Լիւտէրական հոգևորականութեանը իրաւունք տրվեց միայն հսկել մատաղ սերնդի կրօնական կրթութեան վրա: Վերջերս հարց ծագած լինելով, թէ արդեօք Պետերբուրգի Ս. Պետրոս լիւտէրական եկեղեցիների մօտ գտնված դպրոցներն ևս ենթարկվում են այդ կարգադրութեան, թէ ոչ, մինիստրութիւնը բացատրեց, որ այդ դպրոցների վրա չէ տարածվում վերոյիշեալ Բարձրագոյն հրամանի զօրութիւնը և նրանք պէտք է կառավարվեն իրանց ունեցած կանոնադրութեամբ:

—

ՂԱԶԱԽԻՑ հաղորդում են հետևեալը. «Յունվարի 18-ին Ղազախի Բարանայ գիւղում վախճանվեց մի կին 104 տարեկան հասակում: Հանգուցեալը համարվում էր աւագ մի այնպիսի գերդաստանի, որի անդամների թիւը, իր կենդանութեան օրով, հասնում էր 110 հոգու: Նա տեսաւ իր եօթներորդ սերունդը: Իր հանգուցեալ մեծ մօր յիշատակը յաւերժացնելու համար, մեր գաւառի երկրորդ մասի գործակալ Յովհաննէս քահանայ Տէր-Խաչատրեանց նուիրեց 30 ր. մեր եկեղեցու նորոգութեան համար, 10 ր. գիւղի չքաւորներին բաժանելու, և խոստացաւ երկու որդեգիր պահել գաւառական նոր բացվելի ուսումնարանում:»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Յունվարի 17-ին Յովհաննէսեան եղբայրների տանը կայացաւ Բարեգործական ընկերութեան ճիւղի տարեկան երեկոյթը, որ սովորաբար տեղի էր ունենում նոր տարվայ գիշերը. այս տարի յետաձգվել էր այն պատճառով, որ դեկտեմբերի վերջին կարմրուկը խիստ մեծ ծաւալ էր ստացել: Չը նայած որ երեկոյթի օրը սաստիկ փոթորիկ էր, բայց և այնպէս մեծ հասարակութիւն կար, և երեկոյթը ընդհանրապէս աջող անցաւ: Ընդհանուր մուտք եղաւ մօտաւորապէս 350 ր.»:

—

ՂԱՋԱՐԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 28-ին, Մամաջանեանի տանը, յօգուտ տեղական աղքատների, տեղի ունեցաւ տօնածառ—պարահանդէս: Մնաց զուտ արդիւնք 600 ռուբլի: Շնորհակալութեան արժանի են՝ Գէորգ Պիտանեան, որ միանուագ նուիրեց 100 ր., որի չնորհիւ գլուխ եկաւ այդ համակրելի գործը և մի քանի տիկիններ և պարոններ, որ բաւական աջակցեցին գործին, և պ. Մամաջանեանը, որ ձրի յատկացրեց իր տան ամբողջ վերին յարկը»:

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 10-ին, առաւօտեան ժամը 9½-ին, տեղի ունեցաւ արեգակի խաւարումն, որը տևեց քառորդ ժամ: Մահմետական մոլեռանդ ամբոխը զանազան բացատրութիւններ է տալիս այս դէպքերին»:

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 11-ին, հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց միլիոնատէր, Բաստօվում վախճանված Ռնանովի մահվան առիթով: Լուրեր են պատում, որ հանգուցեալի աղգականները պիտի մի խոշոր գումար նուիրեն Ղուբայի եկեղեցուն: Այդ բանի համար աշխատել է մի ղուբայեցի թուրք, Մահմեդ Բասով Խալֆաև, որը մօտ ծանօթ է եղել հանգուցեալին, և որի խնդիրքով պատուիրված էր յիշեալ հոգեհանգիստը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մուշից, դեկտեմբերի 29-ից հաղորդում են. «Մշոյ քաղաքի կից գտնվող՝ Ջրիկ, Կառնիկ, Մօկունք և այլ գիւղօրայքում զինուորները լեցվել ապրում են հայ տներումը. քիչ ցորենը կը ծախվի 120 ղրշ.-ի, ու օրից օր կը բարձրանայ. Թող անհաւատալի չի թւայ ձեզ, որ Մշոյ դաշտի հարիւրաւոր գիւղերից մինչև օրս իսկի տասը ընտանիք չէ գաղթել այլուր:—Նա հպարտ է, ու երբէք չի թոյլ տայ իրան ստորանալ այնքան որ բօշայանայ ու մուրացկան դառնայ... Եւ արդեօք, այսպիսի դառն պայմաններում ինչ կանեն մշեցի զարիբները, որ մի խարար էլ չի գայ. նրանք ով գիտէ աշխարհի որ պուճախն են ինկել, կամ, չը կամ—Աստուած գիտէ միայն թերևս, հեռացած աչքից՝ մոռացած են սրտից ու մտքիցը և իսկի չեն յիշում հայրենիքը, տուն և տեղը, ամուսին ու ճժերը, որոնք գիշեր ու ցորեկ իրանց «հեռաւորի» համար արեշատութիւն կը խնդրեն»:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—

Ինչպէս յայտնի է, ֆրանսիական զինուորական մինիստր Բիլիօ դատի հրաւիրեց Էմիլ Զօլային այն նամակի պատճառով, որ հռչակաւոր վիպագրողը ուղղել էր հանրապետութեան նախագահին և որի մէջ նա յայտնել յանուանէ մեղադրում էր զինուորական մի շարք բարձրաստիճան պաշտօնեաներին և նրանց ստորադրեալներին ամենածանր յանցանքների մէջ: Սակայն գեներալ Բիլիօ Զօլայի դէմ տուած դանգատի մէջ մեղադրում է նրան ոչ այն բոլոր կէտերի համար, որոնք բերված են նրա նամակում. շատ բան զինուորական մինիստրը կուլ է տուել: Այդ առիթով ֆրանսիական պատգամաւորների ժողովում վիճաբանութիւններ տեղի ունեցան: Սոցիալիստական կուսակցութեան տաղանդաւոր պարագլուխ Ժօրէս բողոքեց այդ անարդարութեան դէմ, պահանջելով որ կառավարութիւնը դատարանում Զօլային մեղադրէ նրա բերած բոլոր կէտերի համար:

—Այո, ասաց նա, ստորութիւն է Զօլային դատի ենթարկել, մի կողմ թողնելով նրա մեղադրանքներից մի քանիսը:

Այդ բօպէին Բերնի, որ կանգնած էր կիսաշրջանում, յենվելով աջ կողմի վանդակների վրա, մի ինչ որ բան աղաղակեց. Ժօրէս բարձր ձայնով պատասխանեց.

—Պարոն դը-Բերնի, դուք վախկոտ էք և անպիտան:

Իսկ պարլամենտի կէսը, կարծես շարժվելով մի զսպանակի միջոցով, կանգնեց իր տեղերից: Ամենքը խմբվեցան կիսաշրջանում: Պատգամաւորները խմբվում են նրա շուրջը, սեղմում են նրա ձեռքը: Խաղաղութիւնը վերջ ի վերջոյ հաստատվում է: Փոշի ամպերը քիչ անցնում են և երևում են պատգամաւորները. որը չփում է իր կողքը, որը ուղղում է ժիլետը կամ փողպատը... Նիստը փակվեց, իսկ Ժօրէս շարունակեց իր ճառը յաջորդ նիստին:

Ժօրէս: Եւ այսպէս, ես հարցնում եմ, նախ՝ ինչպէս կարողացաւ կառավարութիւնը դատի ենթարկել Զօլային նրա նամակի մի քանի կէտերի հիման վրա, մի կողմ թողնելով նամակի միւս մասերը: Ինչպէս կարողացաւ մինիստր նախագահը ասել անցեալ նիստում, թէ գեներ-

ԱՂՎԱՓՎԱՅԼ ԸՆԴՓՎԱԿՈՂՋՈՒԹԵՆՈՒ ՎՃՏՈՎԻ

Ինչպես դրոշակավորված «Voss. Zeitung» էր ծանուցել, Ամերիկան դարձյալ կնշանակեր Լեգատ դեսպան Ինչպես նաև Լեգատ դեսպան Ամերիկայի դիպլոմատիկ ներկայացուցիչ Ամերիկայի դիպլոմատիկ ներկայացուցիչ Ամերիկայի դիպլոմատիկ ներկայացուցիչ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատարը № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկոյեան 4 ժամին և 1 րոպէին։ Թէֆլէս է հասնում առաւօտեան 8 ժամ 30 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 15 րոպէին։ Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 28 րոպէին։

Մարդատարը № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ գիշերվայ 12 ժամ և 6 րոպէին։ Թէֆլէս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 55 րոպէին։ Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րոպէին։

Մարդատարը № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 15 րոպէին։ Թէֆլէս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 34 րոպէին։ Բագու է հասնում յերեկվայ 1 ժամ 2 րոպէին։

Մարդատարը № 4 գնացքը ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ դուրս է գալիս՝ երեկոյեան 8 ժամ 35 րոպէին։ Թէֆլէս է հասնում առաւօտեան 9 ժամ 12 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ դուրս է գալիս՝ առաւօտեան 11 ժամին։ Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին։

ԸՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և մլրասեռ. հ.

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ—10½—11½ ժ. կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումն։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի. քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին, և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1½—2½ ժ. ներքին, և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—6½ ժ.

Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վներական և մորթի հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիտ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

72—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգում արդէն սկսվեց մի շարք հայկական ժողովրդական երկերի հրատարակութիւնը, ձեռնարկութեամբ՝ Ց. Պապովի, երաժշտութիւն պ. Կաղաչէնկօի։ Ցայտարարվում է հետեւեալը ի դիտութիւն հայ հասարակութեան։

Լոյս կը տեսնեն «Զէյթունցիների մարշը», «Արաքսի արտասուքը», «Էր հեռանաս», «Հերիք որդեակը», «Կիլիկիա», «Զարթիր սիրտ իմ վըտահար», «Զիմ վզին վզնոց», «Աղջիկ ջան», «Խանում Եւա», «Շողեր-ջան», «Զան իման», «Գնացէք տեսէք», «Սոխակ», «Բացվիր, բացվիր», «Կոտր-կոտր ամպ էր գալիս», «Մի քանի տեսակ լեզգինկա», «Կինտօուրի», «Էյ մանի փարա», և այլն։ Այս բոլորը կարելի է ստանալ Պետերբուրգում պ. Պապովից, Կաղաչէնկօից, և «Журналъ музыки и пѣнія» խմբագրութիւնից, դիմելով հետեւեալ հասցէներով՝ Петербургъ. Знаменская, 40. Іосифъ Рафаиловичъ Поповъ, կամ Садовая, 98. Георгій Алексѣевичъ Козаченко, կամ՝ редакція «Журнала музыки и пѣнія» Садовая, 22. 1—3

ՄԻ ԳԱՂԹԱԿԱՆ

որոնում է խոհարարի պաշտօն։ Հարցնել Եարմուկայում, «Անատօլիա» ճաշարան, Յովհաննէս Կարապետեանին։ (№ 9) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի Ժողովարանի աւագների խորհուրդը խնդրում է պ.պ. անդամներին չնորհ բերել շաբաթ, յունվարի 24-ին, երեկոյեան 9 ժամին, ընդհանուր ժողովին՝ 4 աւագների և 6 կանդիդատների լրացուցիչ ընտրութեան համար։

1—1

ՐԵԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ամբողջ դասընթացն աւարտած մի անձն պատրաստում է աշակերտներ միջնակարգ դպրոցների բոլոր դասարանների համար և կրկնում է դասերը առանց հին լեզուների։ Դիմել՝ Թիֆլիս, Աբաս-Աբադեան հրապարակի վրա, տուն Խօջաեվի, № 21, վերևի յարկը։ (№ 7) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ Ե. Ի. ՓՐԱՆՑԻՈՒՍ

Մասնագէտ կոկորդային, քթային և ականջային հիւանդութիւնների

Ընդունում է 5—7 ժամը երեկոյեան, Վելիամինովսկայա փողոց, տուն № 4, Դումայի հանդէպ։

(142) 9—30

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ վաճառվում են՝ Ստեփան Աւետիքեանի-Բանանցեցու՝ 1) ԳԵԿԱՎԱՐՆԵՐ, գիրք Ա. 40 կ., 2) ՍԱՄԻՏԱՐՆԻ 20 կոպէկ։

(№ 4) 2—3

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՅԻՆ ՁԷԹ, սմբակները պնդացնելու, կակղացնելու և սեացնելու համար։ Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման։ ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.։

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չոքիչէաների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար։ ԳԻՆԸ՝ 75 կօպ.։

ԹԱՄԲԱՑԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար)։ Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և գունաւոր գոյների կաշի մաքրելու։ ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.։

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։

(№ 76) 38—50

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԼՑՍԿՈՒԻՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՑՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԵՊՕ Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ,

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 75) 6—50

ԵՐԱԺԻՇՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ

բոլոր հեղինակութիւնները ծախվում են Թիֆլիսում՝ Սուղանաճեանի, Ֆարինայի, Միրիմանեանի և Լանկօյի մագազիններում։ Ստանալու համար պէտք է դիմել հետեւալ կերպով՝ ТИФЛИСЪ, այդ մագազիններից մէկին։

(և.) (№ 146) 5—10

Լոյս տեսաւ

„ՈՒՍՈՒՑՈՂՄԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ“

դասագիրը. հատոր չորրորդ

3—5 (№ 5) Սահակ քհ. Սահակեանց

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

կանոնադրութեան 17 և 26 յօդուածների համաձայն՝ յունվարի 30-ին, ուրբաթ օր, երեկոյեան 7 ժամին, ընկերութեան նոր չինութեան դահլիճում կը կայանայ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, ուր կը քննվին ու կը հաստատվին 1897 թվի դրամական հաշիւները, կը քննվի ու կը հաստատվի խորհրդի կազմած նախահաշիվը ներկայ 1898 թ. համար և կը վճռվին ընթացիկ գործեր։

(№ 9) 1—3

ԱԼԻՒՐԱՂԱՑՆԵՐ

ԴՈԼՈՐՇՈՒ ՁՐԻ և ՁԻԱՔԱՐՇ

Պատրաստում է, ինչպէս մասնագիտութիւն, ԻՆԺԵՆԵՐՆԵՐ

ԵՄԲԱԼՕՎԻ ԵՒ ԱԼԻԽԱՆՕՎԻ

Գործարանը, Թիֆլիսում, Ալէքսանդրեան փողոց, սեփական տուն։

(№ 102) 48—0

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ՝ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 4/16 փետրվարի ՄԻՆԴՐԷԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԷԼՏ։ Եւ այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ամբօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլիւբակինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենրոդերին։ (№ 76) 18—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (ր.) (№ 76) 11—15

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՕՍՍԻԱ“

Բարձրագոյն հաստատված 1881 թվին

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԱԻԵԼԻ ՔԱՆ 29.000,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵՍՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն դրամագլխի և եկամուտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ ծերութեան ժամանակ, օժիտ աղջկերանց համար, ստիպենդիա երեխաների համար և այլն, առանձին չահաւէտ պայմաններով. ապահովագրողները մասնակցում են ընկ. օգտին։

Ա.ռ 1-ն յունվարի 1897 թ. «ՐՕՍՍԻԱ» ընկերութիւնը ապահովագրած ունի 41,397 անձ,—102,694,700 *рուբլի գումարի։*

ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ինչպէս առանձին անհատների, նոյնպէս և հաւաքական անձանց, այն է—գործարաններում ծառայողների, բանտորների և այլն՝ նուազեցրած վճարներով՝ չնորհիւ դիվիդենդի, որը վճարներից դուրս է հաշվում։

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ չարժական և անչարժ կայքերի (չինութիւնների, մեքենաների, ապրանքի, կահ-կարասիքի և այլն)։

ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. նաւերի ապահովագրութիւն.

Ապահովագրութիւնն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում է վարչութեան մէջ Ս. Պետերբուրգում (Большая Морская, соб. д. № 37.) Թիֆլիսում Սերգիէվսկի փողոց, № 6. և զանազան քաղաքների գործակալութիւններում.

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ դժբաղդ դէպքերից, երկաթուղիով կամ չոգենաւով ճանապարհորդած ժամանակ, երկաթուղային կայարաններում և ծովամատոյցներում։

(№ 86) (ս.) 5—6

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Января 1898 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.